# ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀՌԳՀԱՊՁԲ -18/29 - 3

ք. Երևան «16» 07 2018

<<Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն>>ՓԲԸ -ը ,ի դեմս տնօրեն Մարկ Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ռազմիկ Ավագյան Ա/Ձ, ի դեմս Ռազմիկ Ավագյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժ և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3 498 192 ( երեք միլիոն չորս հարյուր իննսունութ հազար հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ____365____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[1]:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___10___ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| <<Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն>>ՓԲԸ | Ռազմիկ Ավագյան Ա/Ձ |
| Ք.Երևան Ալեք Մանուկյան-5 | Երևան, Շիրակի փ. 58/1շ. 16բն. |
| ՀՎՀՀ 01541435 | «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ |
| <<Արդշինբանկ>>ՓԲԸ | h/h 16069010304100 |
| Հ/Հ 2470103477780000 | ՀՎՀՀ 35094926 |
| Գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյան | Ռազմիկ Ավագյան |
| ------------------------------ /ստորագրություն/ Կ.Տ | ------------------------------ /ստորագրություն/ Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
«16» 07 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը** | արտադրողի անվանումը և ծագման երկիրը** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 13 | 39121500/1 | խոհանոցային պահարաններ<br>Ռազմիկ Ավագյան | Ռազմիկ Ավագյան Ա/Ձ<br>ՀՀ | Պատրաստված ՄԴՖ-վ և եզրպատված ՊՎՔ եզրաժապավենով, երեսամասերը պատրաստված են ՄԴՖ-վ ներկված բարձրորակ ավտոներկով:Ծխնիներ ը և դարակների մեխանիզմները պետք է լինեն բարձր որակի և վաակումային մեղմիչներով, բարձրորակ արծաթագույն բռնակներով; Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից: Երկ 3000,բարձ.2300, խոր.600 Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից: Տես նկար 13 | հատ | 500000 | 500000 | 1.00 | Ք.Երևան Ալեք Մանուկյան 5 | 1.00 | Պայմանագիր կնքելու ամսաթվից մինչև 10.08.2018թ |
| 14 | 39141280/1 | Գզրոցներ<br>Ռազմիկ Ավագյան | Ռազմիկ Ավագյան Ա/Ձ | ԲԵՄ Պատրաստված 10մմ հաստությամբ ֆաներայով, ուղղանկյուն | հատ | 35000 | 525000 | 15.00 | Ք.Երևան Ալեք Մանուկյան | 15.00 | Պայմանագիր կնքելու ամսաթվից |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՀՀ | զուգահեռանիստ ներսի կողմից փայտե կարկասով երեսապատված կավրալինով միմյանց ամրանալու հնարավորությամբ: Բոլոր ֆաներաները պետք է լինեն համապատասխան գույնով գունավորած և բարձր որակի լաքով լաքապատված: Կողքերից տեղափոխելու համար հարմարեցված անցքերով: Երկ.1100մմ Լայն.1000մմ Բարձ.300մմ: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից: Տես նկար14 | | | | | 5 | | մինչև 10.08.2018թ |
| 15 | 39141280/2 | Գզրոցներ<br>Ռազմիկ Ավագյան | Ռազմիկ Ավագյան Ա/Ձ<br>ՀՀ | ԲԵՄ Պատրաստված 10մմ հաստությամբ ֆաներայով, ուղղանկյուն զուգահեռանիստ ներսի կողմից փայտե կարկասով երեսապատված կավրալինով միմյանց ամրանալու հնարավորությամբ: Բոլոր ֆաներաները պետք է լինեն համապատասխան գույնով գունավորած և բարձր որակի լաքով լաքապատված: Կողքերից տեղափոխելու համար հարմարեցված անցքերով: Երկ.1100մմ Լայն.500մմ Բարձ.300մմ: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից: Տես նկար 15 | հատ | 25000 | 375000 | 15.00 | Ք.Երևան Ալեք Մանուկյան 5 | 15.00 | Պայմանագիր կնքելու ամսաթվից մինչև 10.08.2018թ |
| 16 | 44221140/2 | Դռներ | Ռազմիկ Ավագյան | Դուռ երկփեղկանի -- բարձ.2400մմ, լայն.1300մմ, հաստ. | մ2 | 128000 | 399 360 | 3.12 | Ք.Երևան Ալեք | 3.12 | Պայմանագիր կնքելու |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ռազմիկ Ավագյան | Ա/Ձ<br>ՀՀ | 61մմ<br>Պատրաստված է փայտե միջուկով և երեսապատված 18մմ ՄԴՖ-վ, միջնամասում արհեստական բամբակի ձայնամեկուսիչ շերտ: Կարկասը փայտ 120մմ*60մմ:<br>Մեծ փեղկը առնվազն 900մմ: Наличники ՄԴՖ; Ծխնիները և բռնակները պետքէ լինեն բարձր որակի ոսկեգույն;<br>Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից:<br>Մետաղական դռան և նոր տեղադվող դռան միջնամասը 2400*130*2400 չափերով 550 մմ հատվածը ամբողջությամբ երեսապատվում է ՄԴՖ-ով:<br>Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից:<br>Տես նկար 16 | | | | | Մանուկյան<br>5 | | ամսաթվից մինչև 10.08.2018թ |
| 17 | 39141210/12 | հատուկ դեկորատիվկտորնե ր<br><br>Ռազմիկ Ավագյան | Ռազմիկ Ավագյան Ա/Ձ<br><br>ՀՀ | Կառնիզ:<br>Պատրաստված 18մմ ՄԴՖ-վ և եզրպատված ՊՎՔ եզրաժապավենով:<br>Շերտի լայնությունը 200մմ : Ընդհանուր երկարությունը 54գ/մ;<br>Ամրացումը՝պատից 150մմ հեռու, մետաղական անկյունակների միջոցով:<br>Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից: | հատ | 15000 | 15000 | 1.00 | Ք.Երևան Ալեք Մանուկյան<br>5 | 1.00 | Պայմանագիր կնքելու ամսաթվից մինչև 10.08.2018թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | 39141210/13 | հատուկ դեկորատիվ կտորներ<br><br>Ռազմիկ Ավագյան | Ռազմիկ Ավագյան Ա/Ձ<br><br>ՀՀ | Հատակի դեկորով շերտ 18մմ ՄԴՖ-վ և եզրպատված ՊՎՔ եզրաժապավենով Շերտի լայնությունը 200մմ ։ Ընդհանուր երկարությունը 17,1գ/մ: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից: | հատ | 100000 | 100000 | 1.00 | Ք.Երևան Ալեք Մանուկյան 5 | 1.00 | Պայմանագիր կնքելու ամսաթվից մինչև 10.08.2018թ |
| 19 | 39141210/5 | հատուկ դեկորատիվ կտորներՐ<br><br>Ռազմիկ Ավագյան | Ռազմիկ Ավագյան Ա/Ձ<br>ՀՀ | Վերադիր պահարան Երկ 1750, բարձ.1550, խոր.250 Պատրաստված ՄԴՖ-վ և եզրպատված ՊՎՔ եզրաժապավենով: Երկու կողմից դարակաշար 1550*350*250 չափերով; Հայելու չորս կողմում100մմ *100մմ չափով դարակներ թվով 16 լուսատուների համար: Ամրացվելու է պատին: մատակարարվելու է լուսատուների հետ միասին;<br>Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից; Տես նկար 19 | հատ | 140000 | 140000 | 1.00 | Ք.Երևան Ալեք Մանուկյան 5 | 1.00 | Պայմանագիր կնքելու ամսաթվից մինչև 10.08.2018թ |
| 20 | 39299310/3 | հայելի, շրջանակով<br><br>Ռազմիկ Ավագյան | Ռազմիկ Ավագյան Ա/Ձ<br>ՀՀ | Հայելի շրջանակով 2400*900 Պատրաստված18մմ լամինտից և եզրպատված ՊՎՔ եզրաժապավենով ;<br>Հայելու չափսերը 2200*700<br>Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից: Տես նկար 20 | քմ | 27700 | 59832 | 2.16 | Ք.Երևան Ալեք Մանուկյան 5 | 2.16 | Պայմանագիր կնքելու ամսաթվից մինչև 10.08.2018թ |
| 21 | 39121520/3 | Գրապահարաններ | Ռազմիկ Ավագյան | Երկ 4050մմ, բարձ3500մմ, խոր 550մմ | հատ | 600000 | 600000 | 1.00 | Ք.Երևան Ալեք | 1.00 | Պայմանագիր կնքելու |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ռազմիկ Ավագյան | Ա/Ձ ՀՀ | Պատրաստված 18մմ ՄԴՖ-վ և եզրպատված ՊՎՔ եզրաժապավենով: Ծխնիները և դարակների մեխանիզմները պետքէ լինեն բարձր որակի և վաակումային մեղմիչներով, բարձրորակ արծաթագույն բռնակներով; Պահարանի մեջ պետք է ներկառուցված 1.սառնարան,2. խմիչքների բար,3. հեռուստացույց, 4.երկու բարձրախոսներ,5այլ տեխնիկայի համար նախատեսված դարակներ, 6. սեյֆի դուռ,7. գրքերի դարակներ: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից: Տես նկար 21: | | | | | Մանուկյան 5 | | ամսաթվից մինչև 10.08.2018թ |
| 22 | 39121410/6 | սեղան՝ համակարգչի<br><br>Ռազմիկ Ավագյան | Ռազմիկ Ավագյան Ա/Ձ ՀՀ | Չայնագրող տեխնիկայի սեղան; Պատրաստված ՄԴՖ-վ և եզրպատված ՊՎՔ եզրաժապավենով: Երկ 3400, բարձ.950, լայն 1100; Հավաքվում է երեք մասից; Աջ և ձախ կողմերում 750մմ լայնքով սեղաններ ,ներսում դարակներ զանազան տեխնիկայի համար,ինչպես նաև ներկառուցված մետաղական անկյունակից դուռ կապի միջոցների համար; Կողքից և դիմացից դռներ ներկառուցված տեխնիկայի համար; | հատ | 250000 | 250000 | 1.00 | Ք.Երևան Ալեք Մանուկյան 5 | 1.00 | Պայմանագիր կնքելու ամսաթվից մինչև 10.08.2018թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Միջին մասում 1900մմ երկարությամբ երկու համակարգչի ստեղնաշարերի համար նախատեսված դարակներ,ներքևի մասքւմ դառակներ զանազան տեխնիկայի համար: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից; Տես նկար 22: | | | | | | | |
| 23 | 39131100/2 | գրասենյակի դարակաշարեր Ռազմիկ Ավագյան | Ռազմիկ Ավագյան Ա/Ձ ՀՀ | Դարակաշար Պատրաստված ՄԴՖ - ով և երեսապատված ՊՎՔ եզրաժապավեններով: Դարակների մեխանիզմները պետք է լինեն բարձր որակի և վակումային մեղմիչներով, բարձրորակ արծաթագույն բռնակներով: Երկ.600մմ Խոր.600մմ Բարձ.550մմ Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից Տես նկար 23 | հատ | 42000 | 84000 | 2.00 | Ք.Երևան Ալեք Մանուկյան 5 | 2.00 | Պայմանագիր կնքելու ամսաթվից մինչև 10.08.2018թ |
| 24 | 39121410/5 | սեղան՝ համակարգչի Ռազմիկ Ավագյան | Ռազմիկ Ավագյան Ա/Ձ ՀՀ | Ձայնագրող տեխնիկայի սեղան; Պատրաստված ՄԴՖ-վ և եզրպատված ՊՎՔ եզրաժապավենով: Երկ 2640, բարձ.950, լայն 1100; Հավաքվում է երեք մասից; Աջ և ձախ կողմերում 570մմ լայնքով սեղաններ ,ներսում դարակներ զանազան տեխնիկայի համար,ինչպես նաև ներկառուցված մետաղական անկյունակից դուռ կապի միջոցների համար; Կողքից և դիմացից դռներ | հատ | 210000 | 210000 | 1.00 | Ք.Երևան Ալեք Մանուկյան 5 | 1.00 | Պայմանագիր կնքելու ամսաթվից մինչև 10.08.2018թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներկառուցված տեխնիկայի համար; Միջին մասում 1500մմ երկարությամբ երկու համակարգչի ստեղնաշարերի համար նախատեսված դարակներ,ներքևի մասքւմ դառակներ զանազան տեխնիկայի համար; Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից Տես նկար 24 | | | | | | | |
| 25 | 39141210/6 | հատուկ դեկորատիվ կտորներ Ռազմիկ Ավագյան | Ռազմիկ Ավագյան Ա/Ձ ՀՀ | Պատրաստված ՄԴՖ-վ և եզրպատված ՊՎՔ եզրաժապավենով: Արկղի վերևի, ներքևի և դիմացի պատերի վրա իրականացնել խոռոչներ մետաղական ցանցով Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից: Տես նկար 25 | հատ | 35000 | 70000 | 2.00 | Ք.Երևան Ալեք Մանուկյան 5 | 2.00 | Պայմանագիր կնքելու ամսաթվից մինչև 10.08.2018թ |
| 26 | 39141210/10 | հատուկ դեկորատիվ կտորներ Ռազմիկ Ավագյան | Ռազմիկ Ավագյան Ա/Ձ ՀՀ | Երկ 1180մմ, բարձ750մմ, խոր 600մմ Պատրաստված ՄԴՖ-վ; 100մմ բարձրության նիկելապատ ոտքերի վրա; Երկու դռներով ;Ներսում երկու դարակ; Բոլոր դետալները ներկված բարձրորակ ավտոներկով ;Ծխնիները և դարակների մեխանիզմները պետքէ լինեն բարձր որակի և վակումային մեղմիչներով, բարձրորակ արծաթագույն | հատ | 110000 | 110000 | 1.00 | Ք.Երևան Ալեք Մանուկյան 5 | 1.00 | Պայմանագիր կնքելու ամսաթվից մինչև 10.08.2018թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | բռնակներով: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից: Տես նկար 26 | | | | | | | |
| 27 | 39141210/11 | հատուկ դեկորատիվ կտորներ<br><br>Ռազմիկ Ավագյան | Ռազմիկ Ավագյան Ա/Ձ<br>ՀՀ | Երկ 840մմ, բարձ1550մմ, խոր 15մմ Պատրաստված ՄԴՖ-վ; Երկու դռներով; Ծխնիները պետքէ լինեն բարձր որակի և վակումային մեղմիչներով, բարձրորակ արծաթագույն բռնակներով և փականով: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի կողմից Տես նկար 27 | հատ | 60000 | 60000 | 1.00 | Ք.Երևան Ալեք Մանուկյան 5 | 1.00 | Պայմանագիր կնքելու ամսաթվից մինչև 10.08.2018թ |

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

**Եթե հրավերով չի նախատեսվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա «անվանումը և ապրանքային նշանը» սյունակից հանվում է «և ապրանքային նշանը», իսկ «արտադրողի անվանումը և ծագման երկիրը» սյունակից՝ «արտադրողի անվանումը և» բառերը:

**ԳՆՈՐԴ**

<<Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն>> ՓԲԸ
Ք.Երևան Ալեք Մանուկյան-5
ՀՎՀՀ 01541435
<<Արդշինբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 2470103477780000
Գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյան

/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**

Ռազմիկ Ավագյան Ա/Ձ
Ք.Երևան, Շիրակի 58/1շ.16բ
ՎՏԲ Հ/Հ 16069010304100
ՀՎՀՀ 35094926
Տնօրեն Ռազմիկ Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«16» 07 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 13 | 39121500/1 | խոհանոցային պահարաններ | X | X | 500000 | X | X | X | 500000 |
| 14 | 39141280/1 | գզրոցներ | X | X | 525000 | X | X | X | 525000 |
| 15 | 39141280/2 | գզրոցներ | X | X | 375000 | X | X | X | 375000 |
| 16 | 44221140/2 | դռներ | X | X | 399 360 | X | X | X | 399360 |
| 17 | 39141210/12 | հատուկ դեկորատիվ կտորներ | X | X | 15000 | X | X | X | 15000 |
| 18 | 39141210/13 | հատուկ դեկորատիվ կտորներ | X | X | 100000 | X | X | X | 100000 |
| 19 | 39141210/5 | հատուկ դեկորատիվ կտորներ | X | X | 140000 | X | X | X | 140000 |
| 20 | 39299310/3 | հայելի, շրջանակով | X | X | 59832 | X | X | X | 59832 |
| 21 | 39121520/3 | գրապահարաններ | X | X | 600000 | X | X | X | 600000 |
| 22 | 39121410/6 | սեղան՝ համակարգչի | X | X | 250000 | X | X | X | 250000 |
| 23 | 39131100/2 | գրասենյակի դարակաշարեր | X | X | 84000 | X | X | X | 84000 |
| 24 | 39121410/5 | սեղան՝ համակարգչի | X | X | 2100000 | X | X | X | 210000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 25 | 39141210/6 | հատուկ դեկորատիվ կտորներ | X | X | 70000 | X | X | X | 70000 |
| 26 | 39141210/10 | հատուկ դեկորատիվ կտորներ | X | X | 110000 | X | X | X | 110000 |
| 27 | 39141210/11 | հատուկ դեկորատիվ կտորներ | X | X | 60000 | X | X | X | 60000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ԳՆՈՐԴ**

<<Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն>>ՓԲԸ
Ք.Երևան Ալեք Մանուկյան-5
ՀՎՀՀ 01541435
<<Արդշինբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 2470103477780000
Գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Ռազմիկ Ավագյան Ա/Ձ
Երևան, Շիրակի փ. 58/12. 16բն.
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
h/h 16069010304100
ՀՎՀՀ 35094926

Ռազմիկ Ավագյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 16 » 07 2018 կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ ___________________________

հվհհ _________________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ___________________________

հվհհ_________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ___________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« 16 » 07 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն